

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لوييس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Արարատը



Ի՛նչ մեծություն, ի՛նչ վեհություն
Արքայական հպարտություն
Շատ մը դարեր եկեր ու անցեր
Դուն կը մնաս յաւերժություն:

Օթթաւայի Աշուղ
Նիկողոս Թաշճեան

218, Դեկտեմբեր 2016 թ. No 218, December 2016 شماره ۲۱۸ دی ماه ۱۳۹۵

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայոց Ամանորը.....1
- 3- Հայաստանի Հանրապետություն.....2
- 4- Արևմտյան Հայաստան.....7
- 5- Միյուռը.....9
- 6- Միջազգային.....10
- 7- Մշակույթ.....11

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....0-3

Շապիկի առաջին էջում` Արարատը` Հայկական ոգին

Վերջին էջում` Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 218, Դեկտեմբեր. 2016 No. 218, Dec. 2016

ماهنامه لویس - شماره ۲۱۸ دی ماه ۱۳۹۵

Մշակութային եւ հասարակական ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր`

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ`

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկը **15875-9488 Թեհրան - Իրան**

Էլեկտրոնային փոստ` louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն` www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Յոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհանձնվել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Արցախի բնակչության 99.7 տոկոսը դեմ է նախկին «7 շրջանների» զիջմանը, նույնիսկ ԼՂՀ անկախության դիմաց



Լևոն Տեր Պետրոսյանը այն մեծ դավաճանն է, որ իր 1990-ականների գաղտնի հանդիպումով Ազերիների հետ Բեյգիայում գնում էր թուրքերին հանձնել Մեդրիի, շրջանը ապա Արցախը: Այդ դավաճանությունը բացահատվեց մեր կողմից, որի մասին մեր հոդվածը ընդարձակ արձագանք գտավ ժամանակին և տապալվեց այդ դավաճանությունը: Մենք դեռ չենք խոսում նրա հայրենաքանդ դավաճանության մասին` Հայաստանի տնտեսության քայքայման նրա մատնա-հրեական նախաձրագրված դավադրության կապակցությամբ:

Սկզբից նրա դավադրությունը Արցախի վաճառման մասին արդեն նորություն չէ: Մենք առաջարկում ենք անհապաղ ձերբակալել այդ դավաճանին իր բազմաթիվ ոճրագործությունների ու դավաճանությունների պատճառով:

Նրա 2016 թ. դեկտեմբերի ելույթը նպատակադրված էր հիասթափեցնել հանրությանը, նրանից խլել հույսի վերջին նշույնները, պարտվողական հոգեբանության տարածումը, և այլն, և այլն, որոնց արդյունքում Հայ ժողովուրդը կկորցնի իր ազգային արժանապատվությունն ու արժանիքները, մայրենի հողը և կդառնա թշնամու դեմ պարտված հյու-հնազանդ ծառա եթե մի երկրորդ ցեղասպանության չենթարկվի...

ՀՈՒԿ- 19-12-2016 Կանադա

Ըստ IPSC- հարցման` Արցախի բնակչության 99.7 տոկոսը դեմ է նախկին «7 շրջանների» միանգամից զիջմանը` նույնիսկ անկախության միջազգային ճանաչման դիմաց: Այս մասին այսօր` դեկտեմբերի 18-ին, իր ֆեյսբուքյան էջում գրել է ԼՂՀ վարչապետի մամուլի խոսնակ Արտակ Բեգլարյանը:

«IPSC սոցիոլոգիական ընկերության կողմից այս տարվա հուլիսին Արցախում կատարված սոցիալական արդյունքներով` Արցախի բնակչության 99.7 տոկոսը դեմ է նախկին «7 շրջանների» միանգամից զիջմանը` նույնիսկ անկախության միջազգային ճանաչման դիմաց, իսկ 99.4 տոկոսը` դրանց փուլային զիջմանը:

Ավելին` 82 տոկոսը ասել է, որ եթե նույնիսկ միջազգային ճնշման ներքո տարածքներ տալու խնդիր լինի, ապա ժողովուրդը պետք է զենք վերցնի եւ պաշտպանի այդ հողերը:

Հող տվողն էլ է ժողովուրդը, հող պաշտպանողն էլ...»,-գրել է նա:

ԵՐԵՔ ՆՈՐ ՏԱՐԻ՝
ԿԱՂԱՆՂ, ՆԱՎԱՍԱՐԴ ԵՆ ԱՄԱՆՈՐ



Հայ ժողովուրդն իր պատմության մեջ ունեցել է երեք Նոր տարի՝ Կաղանդ, Նավասարդ և Ամանոր անուններով: Դեռևս վաղնջական ժամանակներում հայերը նոր տարին ազդարարել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը, որը նաև բնության զարթոնքի խորհրդանշան էր: Բոլոր գավառներում Կաղանդը նշվում էր մեծ տոնախմբությամբ, տաճարներում տոնական ծեսեր էին կատարվում, որոնք ուղեկցվում էին աստվածներին զոհեր մատուցելով: Հայոց երկրորդ նոր տարին նշվում էր Նավասարդի 1-ին, (այսինքն՝ օգոստոսի 11-ին)՝ այն օրը, երբ հայոց հիմնադիր Հայկ Նահապետը հաղթեց Տիտանյան Բելին: Այն 12-րդ դարում ընդունել է տոմորագետ Հովհաննես Մարկավագը: Հայկական ավանդական Ամանորը յոթօրյա բացօթյա տոնակատարությամբ նշվել է Նմատ լեռան ստորոտում՝ արքունիքի, աշխարհագորի ներկայությամբ:

Աշխարհի տարբեր ժողովուրդներ տարբեր ամիսներ էին համարում նոր տարվա սկիզբը, ուստի այս բազմազանությունը երկրների տնտեսական և մշակութային փոխհարաբերություններում առաջացնում էր որոշ դժվարություններ: 18-րդ դարում Միմեոն Երևանցի կաթողիկոսն անցկացրեց տոմարագիտական ռեֆորմ, որի համաձայն հայերն Ամանորը սկսեցին նշել հունվարի մեկին: Ժամանակը գորեղ է ժողովուրդների կենցաղը և սովորությունները փոխելու գործում: Այսպես՝

այսօր **ամանորյա սեղանը** գցվում է շքեղություն խորհրդանշելու համար, իսկ ահա հին Հայաստանում արգելվում էր սեղանին ամեն տեսակ մսեղեն դնել, քանի որ

Նավասարդը ոչ թե ուտիս, այլ պաս օր է: Ավանդական ուտեստները պատրաստվում էին հատիկեղենից՝ լոբուց (որի պատիճը խորհրդանշում էր ընտանիքի ամրությունը, իսկ հատիկը՝ ընտանիքի սաղմը), ոսպից, չրերից, ընկույզներից և այլն: Սեղանի զարդը համարվում էր Տարի հացը, որի մեջ պատրաստելու ընթացքում դրվում էր գուշակության դրամը՝ դովլաթը: Հացը բաժանվում էր 12 հավասար մասերի, և ընտանիքի այն անդամին, ում բաժին էր ընկնում դովլաթը, Նոր տարում հաջողություններ էին սպասվում:

Կլաուսին: Բայց մեր նախնիները նույնպես ունեցել են ձմեռային հրաշագործ, ում անվանում էին Մեծ պապուկ կամ Կաղանդ պապա: Նա առնչվում էր կաթողիկոս Սահակ Պարթևի անվան հետ, ով, համաձայն ավանդության, հայտնվում էր գավազանով և ոչխարի մորթուց պատրաստված քուրքով:

Մերօրյա տոնաձևերը կապում են գերմանական Ռեֆորմացիայի առաջնորդ Մարտին Լյութերի անվան հետ: Մի գիշեր հոգնած տուն գնալիս Լյութերը նստում է ճամփեզրին՝ մի փոքր հանգստանալու: Ճանապարհը զարդարված է լինում եղևնիներով, որոնց ճյուղերի արանքից առկայծում են փայլուն աստղերը: Տպավորված նրանց գեղեցկությամբ՝ Մարտին Լյութերը իր տանը զարդարում է առաջին եղևնին: Հայ իրականության մեջ տոնաձև, որպես այդպիսին, չի եղել, սակայն դեռևս հնուց հայերն ունեցել են ծառերի պաշտամունք և տոնաձևերին փոխարինել են ձիթենու ճյուղերը: Նրանցից ամենահաստը Նոր տարվա գիշերը խրել են մեծ հացի մեջ և զարդարել ընկուզեղենով, ցորենի հասկերով, լոբիով, զանազան մրգերով, հատկապես խնձորներով, որոնք պտղաբերություն էին խորհրդանշում, նաև չարխափաններով ու մարդակերպ կամ կենդանակերպ թխվածքներով: Տանտերը Կաղանդի ծառը տարել է եկեղեցի և քահանայի օրհնությունը ստանալուց հետո վերադարձրել տուն:

Տարվա գաղափարը առաջին անգամ ծագել է Եգիպտոսում՝ կապվելով Նեղոս գետի վարարման հետ: Վերջինս համընկնում էր Միրիուս աստղի երևալուն: Եվ ահա այդ աստղի ու Նեղոսի վարարման միջև ընկած ժամանակաշրջանն էլ կոչեցին տարի:

Հայաստանի Հանրապետություն

28 տարի անց. Այսօր Սպիտակի ավերիչ երկրաշարժի տարեկիցն է



28 տարի առաջ՝ 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղական ժամանակով ժամը 11:41, Հայաստանը ցնցեց Սպիտակի ավերիչ երկրաշարժը: Հզոր ստորգետնյա ցնցումները կես ռոպեում ավերեցին հանրապետության գրեթե ողջ հյուսիսային մասը՝ ընդգրկելով մոտ 1 մլն բնակչություն ունեցող տարածք: Երկրաշարժի էպիկենտրոնում՝ Սպիտակում, ցնցումների ուժգնությունը կազմել է 10 բալ (12-բալանոց սանդղակով): Ստորգետնյա ցնցումները զգացվել էին Երեւանում եւ Թբիլիսիում:

Մասնագետների հաշվարկներով՝ երկրաշարժի պահին երկրակեղևի պատռվածքի գոտուց ազատվել է Հիրոսիմայի վրա նետած ատոմային ռումբի նման 10 ատոմային ռումբի պայթյունին հավասարազոր էներգիա: Երկրաշարժի առաջ բերած ալիքը տարածվել էր ողջ Երկրով եւ արձանագրվել Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի եւ Ավստրալիայի գիտական լաբորատորիաներում:

Պաշտոնական տեղեկություններով՝ զոհվել է ավելի քան 25 հազար մարդ, 19 հազարը հաշմանդամ է դարձել, անօթեւան է մնացել 530 հազար բնակիչ:

Երկրաշարժի հետեւանքով հիմնովին ավերվեց Սպիտակ քաղաքը: Սպիտակի եւ մոտակա գյուղերի հետ մեկտեղ բնության տարերքը ավերեց 21 քաղաք ու ավան, 324 գյուղ, ոչնչացրել Հայաստանի երկրորդ քաղաք Լենինականի (այժմ Գյումրի) բնակելի, սոցիալական եւ արդյունաբերական ֆունդի 80 տոկոսը: Մեծ ավերածություններ եղան նաեւ մեծությամբ երրորդ քաղաքում՝ Կիրովականում (այժմ Վանաձոր): Երկրաշարժը շարքից հանեց երկրի արդյունաբերական ներուժի մոտ 40 տոկոսը: Այն ժամանակ Հայաստանին օգնության եկավ ողջ աշխարհը:

93 տարեկանում մահացել է «Լենֆիլմ» կինոստուդիայի ամենատարեց ռեժիսոր Սերգեյ Միքայելյանը

Սանկտ Պետերբուրգում 93 տարեկանում մահացել է Ռուսաստանի ժողովրդական արտիստ, «Լենֆիլմ» կինոստուդիայի ամենատարեց ռեժիսոր Սերգեյ Միքայելյանը: Այս մասին հայտնում է կինոստուդիայի կայքը:

Նրա հուղարկավորության օրվա եւ վայրի մասին լրացուցիչ տեղեկություն կադորդվի:



Սերգեյ Միքայելյանը Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերան է, նա 17 տարեկանում կամավոր ճակատ էր մեկնել, վիրավորվել Ռժեւի մատույցներում Մոսկվայի պաշտպանության ժամանակ: Ռեժիսորի ստեղծագործական գործունեությունը 1956 թվականից կապված է «Լենֆիլմի» հետ: Նա նկարահանել է «Գնում եմ դեպի կայծակը», «Մարտն ընդունում եմ», «Այրիներ», «Պատմիր ինձ քո մասին», «Սրբանակ», «Միայն մեկ կյանք», «Ֆրանսիական վախ», «Սիրահարված սեփական ցանկությամբ», «100 զինվոր եւ մեկ աղջիկ» ֆիլմերը: 1963-ին Միքայելյանը նկարահանել էր առաջին խորհրդային ստերեոձայնային ֆիլմը՝ «Գունավոր քարերը»:

Պուսահայ արծաթագործը Երեւանում 40 աշխատատեղ է բացել եւ ուզում է հասցնել 150-ի



Ստամբուլի Fancy արծաթագործական ընկերությունը Երեւանում բացել է դուստր ձեռնարկություն՝ 40 աշխատատեղով: Այդ մասին ասել է ընկերության համասեփականատեր Արիս Դեմիրը (Դեմիրճյանը):

Դուստր ձեռնարկությունը բացվել է «Մերիդիան» ազատ տնտեսական գոտում, որտեղ ազատվել է հարկերից:

«Իսթանպուլի մեջն ալ արտադրություն ունինք, հոս ալ: Կարտահանենք Ռուսաստան, Հունաստան, Ամերիկա՝ ամեն կողմ: Հարկային կամ այլ մարմիններու հետ ալ ամեն բան շատ սահուն կերթա, դժվարութիւն հանդիպած չենք», - ասաց նա:

Փորձառու վարպետներ գտնելը սկզբից հեշտ չէր, սակայն աշակերտները սովորեցին շատ արագ: «Իրաւ կըսեն, որ մեր ժողովուրդը ոսկերչութեանը ունակ է: Մարդ կրնա ըսել՝ ծնած ստեն արդեն ոսկերիչի գործը կիմանան: Երեք ամսե վերջ արդեն ամենը կը տրվին, ինչ որ կուզենք», - ասաց Դեմիրճյանը:

Մահացել է արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը



Քիչ առաջ «Նաիրի» բժշկական կենտրոնում մահացել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը: NEWS.am-ի հետ զրույցում տեղեկությունը հաստատեց «Նաիրի» բժշկական կենտրոնի աննախնայի տեղաբնակիչի և վերակենդանացման ծառայության ղեկավար Անատոլի Գնունին:

Հիշեցնենք, որ Արմեն Երիցյանը այսօր՝ դեկտեմբերի 13-ին, անգիտակից վիճակով տեղափոխվել էր հիվանդանոց. Նա տեսական ժամանակ տառապում էր ծանր հիվանդությամբ:

Արմեն Երիցյանը ծնվել է 1960թ. Երևանում: Նա 1982 թ. աշխատել է ՀՀ ոստիկանության Խորհրդային շրջգործկոմի ՆԳ բաժնի պետ, ապա՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ: 2001 թ.՝ ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ, 2003 թ. ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, 2008 թ հունիսի 4-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ:

2010 թ. մարտի 15-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ազատվել է ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի պաշտոնից: 2010 թ. մարտի 15-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար՝ պաշտոնավարելով մինչև 2012 թվականի մայիսի 31-ը: 2012 թ. հունիսի 4-ին ՀՀ Նախագահի հրամանագրով վերանշանակվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար՝ պաշտոնավարելով մինչև 2013 թվականի ապրիլի 9-ը: 2013 թ. ապրիլի 9-ից մայիսի 8-ը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար: 2013 թ. մայիսի 8-ին ՀՀ Նախագահի հրամանագրով վերանշանակվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար: 2013 թվականի ապրիլի 3-ից 18-ը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար: 2014 թ. ապրիլի 18-ին ՀՀ Նախագահի հրամանագրով վերանշանակվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար: 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ազատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնից: 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնում:

2016 թ. փետրվարի 24-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ազատվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնից: 2016 թ. փետրվարի 24-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ

արտակարգ իրավիճակների նախարար: Նա նաև դասավանդել է Երևանի պետական համալսարանում:

ՀՀ Նախագահի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի հրամանագրով պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով:

Պարգևատրվել է «Արիության մեդալով», «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» և «Մխիթար Գոռ» մեդալներով, ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Իրավաբանական գիտությունների դոկտոր է: 10 մենագրությունների, 3 միջազգային իրավական ակտերի ժողովածուների և 100-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է:

«Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահն է եղել, սակայն, 2014 թվականի ապրիլի 16-ին իր դիմումի համաձայն դուրս է եկել կուսակցությունից այն բանից հետո, երբ կուսակցության քաղաքական խորհուրդը որոշում կայացրեց կառավարող կուսից հայում չընդգրկվելու վերաբերյալ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Գատապարտում ենք ահաբեկչությունը. Գարեգին Բ-ն ցավակցել է Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հովվապետին



Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն, այսօր՝ դեկտեմբերի 12-ին, ցավակցական գիր է հղել Ղպտի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Ալեքսանդրիայի Պապ և Համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն Թավադրոս Բ-ին՝ Կահիրեի (Եգիպտոս) Ս. Պետրոս և Ս. Պողոս եկեղեցում տեղի ունեցած ահաբեկչության առիթով, որին զոհ են դարձել բազմաթիվ անմեղ մարդիկ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության և Հայոց Եկեղեցու հոտի անունից խորին վշտակցություն է հայտնել Նորին Սրբությանը և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հավատացյալներին:

«Մենք խստագույնս դատապարտում ենք ահաբեկչական գործողությունները քրիստոնեական եկեղեցիներում և կոչ ուղղում բարի կամքի տեր բոլոր մարդկանց անհրաժեշտ միջոցները ձեռնարկել կանխարգելելու մարդկության դեմ գործվող նման հանցագործություններն ու ոճիրները», - ասվում է Վեհափառ Հայրապետի ցավակցագրում:

Աղոթելով սպանվածների հոգիների հանգստության համար՝ Նորին Սրբությունն իր հոգևոր եղբորը և դպտի ժողովրդին

ցանկացել է Սուրբ Հոգու մխիթարություն և շուտափույթ ապաքինում բոլոր վիրավորներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հավատացյալներին մաղթել է խաղաղություն և անվրդով կյանք՝ առանց նման հանցագործությունների և սարսափելի ահաբեկչական դրսևերումների:

Հայ-ռուսական միացյալ զորախմբի պայմանագիրն ու հիմնական թեզերը. ո՞վ է լինելու հրամանատարը



Հայ-ռուսական միացյալ զորախմբի պայմանագիրն ու հիմնական թեզերը

«Իրազեկ քաղաքացիների միավորմանը» հաջողվել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունից ստանալ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի միացյալ խմբավորման մասին 2016թ. նոյեմբերի 30-ին ստորագրված համաձայնագիրը (որը հասանելի է այստեղ):

<http://uicarmenia.org/wp-content/uploads/2016/12/Hamadzaynagir-Miacyal-zorakhumb-arm.pdf>

Ըստ համաձայնագրի և հրապարակված այլ տեղեկությունների, Հայաստանում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանը և ՀՀ ՁՈւ 5-րդ բանակային կորպուսը միավորվում են զորքերի միացյալ խմբավորման մեջ:

Չորքերի կառավարումը

Չորքերի կառավարումը իրականացնելու է միացյալ խմբավորման հրամանատարը, ում, ՌԴ նախագահի համաձայնությամբ նշանակելու է ՀՀ նախագահը:

Խաղաղ ժամանակ միացյալ խմբավորման հրամանատարը ենթարկվելու է ՀՀ ՁՈւ գլխավոր շտաբի պետին, իսկ պատերազմի (կամ դրա իրական վտանգի) ժամանակ կամ ՀՀ ՁՈւ գլխավոր շտաբի պետին կամ ՌԴ հարավային ռազմական օկրուգի հրամանատարին: Թե կոնկրետ ո՞ւմ է ենթարկվելու միացյալ խմբավորման հրամանատարը պատերազմի ժամանակ որոշելու են ՀՀ և ՌԴ զերագույն գլխավոր հրամանատարները: Պայմանագրով որևէ կերպ սահմանված չէ, թե ինչ է լինելու, երբ երկու երկրների զերագույն հրամանատարները չգան ընդհանուր կարծիքի:

Միացյալ խմբավորման հրամանատարը հրամաններ է ստանալու ոչ միայն իր անմիջական վերադասից, այլ, նաև, երկու երկրների նախագահներից և պայմանագրով ամրագրված չէ, թե ի՞նչ պետք է արվի, երբ այդ հրամանները իրարամերժ են:

Փոխարենը, պայմանագրով հստակ է, որ միացյալ զորքերի կիրառման պլանը մշակվում է 102-րդ ռազմակայանի ու միացյալ զորքերի հրամանատարության կողմից: Համատեղ զորքերի կիրառման որոշումը պետք է կայացնեն ՀՀ և ՌԴ զերագույն գլխավոր հրամանատարները՝ համատեղ:

Միացյալ հրամանատարության պաշտոնական լեզուն լինելու է ռուսերենը:

Նպատակները

Ըստ պայմանագրի և դրան կից կանոնակարգի, միացյալ խմբավորման նպատակները լոռզված են ու անմխարժեք, իսկ դրանց մի մասը, պարզապես մտահոգիչ:


Այսպես, խնդիրների մեջ են ոչ միայն հնարավոր ագրեսիայի հետ մղումը կամ երկրների սահմանների պաշտպանությունը, այլ, անգամ «տեղեկատվական» ու «տեղեկատվահոգեբանական» միջոցների հակազդեցությունը: Դժվար է ասել, թե ի՞նչ գործողություններ են կանգնած այս, բավականին անմխարժեք խնդիրների հետևում:

Սակայն, բացի պայմանագրով թվարկված խնդիրներից, դրանով նաև սահմանվում է, որ ՀՀ և ՌԴ ՁՈւ զերագույն գլխավոր հրամանատարները կարող են սահմանել այլ խնդիրներ ևս: Սա նշանակում է, որ անկախ պայմանագրում նշվածից, համատեղ զորախումբը կարող է ստանալ ցանկացած այլ նպատակ ու դրանից բխող հրաման:

Եվ եթե հաշվի առնենք, որ պայմանագրով բավականին անմխարժեք են սահմանված «ագրեսիայի անմիջական վտանգ» հասկացությունը և այն տարածքը, ուր գործում է համատեղ զորախումբը, երկու երկրների ղեկավարները կրող են, դրա վրա հիմնվելով, ընդհուպ մինչև Երեւանում ցույցեր ցրելու, կամ ասենք, Վրաստան ներխուժելու մասին հրաման տան:

Այնուամենայնիվ նշենք, որ հստակ է, որ միացյալ խմբավորման կիրառման որոշումը պետք է համատեղ կայացնեն Հայաստանի ու Ռուսաստանի ՁՈւ զերագույն գլխավոր հրամանատարները:

Հայաստանը բարձր է գնահատել դարաբաղյան հակամարտության հարցում Իրանի հավասարակշիռ դիրքորոշումը. նախագահ



Հայաստանը բարձր է գնահատել դարաբաղյան հակամարտության հարցում Իրանի հավասարակշիռ դիրքորոշումը: Այս մասին ղեկտեմբերի 21-ին Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հետ հանդիպումից հետո, լրագրողներին ասել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Նախագահը նշեց, որ Իրանի ղեկավարին է ներկայացրել առաջընթաց գրանցելու հարցում Հայաստանի և ԵԱՀԿ ՄԻՄ

համանախագահ երկրների՝ Ադրբեջանի սանձազերծած ապրիլյան ագրեսիայի հետեւանքների վերացմանը եւ Վիեննայի համաձայնագրերի իրականացմանն ուղղված ջանքերը:

Նախագահի խոսքով՝ հաստատվել է, որ հակամարտությունը չի կարող ռազմական լուծում ունենալ, եւ նշել է, անթույլատրելի է համարում ցանկացած քայլ, որն ուղղված է տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմանը:

Մեդրի եւ Ազարակ քաղաքներում վառվեց խորհրդանշական կրակը եւ տրվեց գազամատակարարման մեկնարկը



Դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Իրանի հետ սահմանամերձ Մեդրի եւ Ազարակ քաղաքներում կառուցված գազի բաշխման ցանցի պաշտոնական բացումը: Իրանի նախագահ Հասան Ռոհանիի Հայաստան կատարած այցի օրը վառվեց խորհրդանշական կրակը եւ տրվեց գազամատակարարման մեկնարկը:

Մեդրի եւ Ազարակ քաղաքների գազի բաշխման ցանցի կառուցման ծրագիրը հնարավոր եղավ իրականացնել Իրանի Իսլամական Հանրապետության անմիջական օժանդակության շնորհիվ: Այդ նպատակով Իրանի կառավարությունը տրամադրեց 2 մլն դոլար դրամաշնորհ: Իր հերթին Հայաստանի կառավարությունը ստանձնեց տրամադրվող միջոցների հաշվին ապրանքների մատակարարման եւ ծառայությունների մատուցման գործարքներից զանձվող հարկերի, մաքսատուրքերի եւ այլ պարտադիր վճարների հետ կապված ծախսերը:

Մեդրի եւ Ազարակ քաղաքների գազի բաշխման ցանցի կառուցման աշխատանքներն իրականացրեց իրանական «Սաներջի» ընկերությունը:

Ծրագրի շրջանակներում Մեդրիում անցկացվել են շուրջ 26,5 կմ, իսկ Ազարակում՝ 4,8 կմ երկարությամբ տարբեր ճնշման գազատարներ: Մեդրի քաղաքի գազամատակարարումն ապահովելու նպատակով կառուցվել է եւս շուրջ 1 կմ երկարությամբ բարձր ճնշման գազատար եւ գազաբաշխիչ կայան, որը նախատեսված է նաեւ քաղաքի հարակից բնակավայրերի գազամատակարարման համար:

Մի քանի ամիս տեւած աշխատանքներից հետո ծրագիրը հաջողությամբ ավարտվեց: Արդյունքում՝ ամբողջությամբ գազիֆիկացվել է Մեդրի քաղաքը եւ Ազարակի մի մասը՝ շուրջ 50 տոկոսը:

Վիկտոր Դալլաքյանն առաջարկում է ստեղծել հանձնաժողով եւ ուսումնասիրել «Մարտի 1»-ն ու «Հոկտեմբերի 27-ը»



Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում «Երրորդ Հանրապետություն» կուսակցությունը հանդես է գալիս արցախահայության ինքնորոշման իրավունքի պաշտպանության եւ միջազգային ճանաչման գործընթացի իրականացման, անվտանգության միջազգային երաշխիքների ապահովմամբ՝ Արցախի հիմնախնդրի խաղաղ, հակամարտության երկու կողմերի՝ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ փոխհամաձայնության հիման վրա կատարված այնպիսի լուծման կողմնակից, որին հավանություն կտա Արցախի ժողովուրդը: Այս մասին, այսօր՝ դեկտեմբերի 23-ին, «Երրորդ հանրապետություն» կուսակցության համագումարի ժամանակ իր ելույթում նշել է ԱԺ-ում ՀՀ նախագահի նախկին ներկայացուցիչ Վիկտոր Դալլաքյանը:

Նրա խոսքով, այդ համատեքստում բանակցային գործընթացում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիիրավ կողմ հանդես գալը բխում է արցախյան հակամարտության բովանդակությունից ու տրամաբանությունից եւ մեծապես կնպաստի հիմնախնդրի համապարփակ կարգավորմանը:

«Միաժամանակ կարելու է նաեւ Հայաստանի դերը հայ-ադրբեջանական հարաբերությունների ընդհանուր կարգավորման համատեքստում, առանց որի անհնարին է նաեւ արցախյան հիմնահարցի վերջնական հանգուցալուծումը», -ասել է Դալլաքյանը:

Նա ընդգծել է, որ կուսակցության ծրագրում նաեւ ամրագրված են հասարակական հնչեղություն ունեցող մի շարք կնճռոտ հարցերի վերաբերյալ հստակ մոտեցումներ. «Մենք առաջարկում ենք՝

1. քայլեր ձեռնարկել ստեղծելու ԱԺ քննիչ հանձնաժողով, որը կուսումնասիրի 1991-2017 թթ. ժամանակահատվածում ՀՀ նախագահների, ԱԺ նախագահների ու պատգամավորների, վարչապետների ու նախարարների եւ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում ամրագրված այլ պաշտոնյաների ու նրանց հետ փոխկապակցված անձանց գույքի, ունեցվածքի եւ եկամուտների իրական պատկերը, դրանց ծագման աղբյուրները, համապատասխանությունը

վերոհիշյալ անձանց օրենսդրությամբ սահմանված եկամուտներին /աշխատավարձերին/ ու նրանց կողմից ներկայացված հայտարարագրերին,

2. քայլեր ձեռնարկել ստեղծելու ԱԺ քննիչ հանձնաժողով, որը կուսումնասիրի 1991-2017 թթ. ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում իրականացված պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման/ օրինականությունը՝ բացառելով, այսպես կոչված, վիուկների որսի եւ սեփականության վերաբաշխման որեւէ ուղղվածությունն ու միտվածությունը,

3. քայլեր ձեռնարկել ստեղծելու ԱԺ քննիչ հանձնաժողով, որը կուսումնասիրի 1996 թ. սեպտեմբերի 25-ին ԱԺ-ի մոտ տեղի ունեցած իրադարձությունների, 1999 թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության, 2004 թ. ապրիլի 11-12-ի զիշերը ԱԺ մերձակայքում խաղաղ ցուցարարների նկատմամբ իրականացված վայրագությունների, 2008 թ. մարտի 1-ի իրադարձությունների եւ սպանդի բացահայտման, 2016թ. հուլիսի 17-ից մինչեւ հուլիսի 31-ը Երեւան քաղաքում ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքի գրավմանն առնչվող իրադարձությունների եւ բողոքի ակցիաների ժամանակ կատարված բռնությունների ու սպանությունների հետ կապված խնդիրները,

4. քայլեր ձեռնարկել Հայաստանում քաղաքական դրդապատճառներով պատասխանատվության ենթարկված անձանց ազատ արձակելու ուղղությամբ, բացառել բոլոր կարգի քաղաքական հետապնդումները,

5. քայլեր ձեռնարկել ստեղծելու ԱԺ քննիչ հանձնաժողով, որը կուսումնասիրի 1991-2017 թթ. ժամանակահատվածում Հայաստանի կողմից օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի եւ դրամաշնորհների օգտագործման արդյունավետությունը,

6. քայլեր ձեռնարկել ստեղծելու ԱԺ քննիչ հանձնաժողով, որը կուսումնասիրի 1991-2017թթ. ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունից անօրինական ճանապարհով դուրս բերված կապիտալը Հայաստան վերադարձնելու ուղղությամբ: Տարբեր գնահատականներով այդ ընթացքում Հայաստանից դուրս է բերվել ավելի քան 30 միլիարդ դոլար»:

Քանի դեռ մենք Մոսկվայի ազդեցության տակ ենք, Իրանը Հայաստանում ներդրում չի անի. Աշոտ Եղիազարյան



Իրանցի ներդրողները Հայաստանում ներդրումներ չեն կատարի, քանի որ Հայաստանը գտնվում է Ռուսաստանի

ազդեցության տակ: Այս մասին այսօր՝ դեկտեմբերի 23-ին, լրագրողների հետ հանդիպմանը նշել է Միջազգային եւ անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի փորձագետ Աշոտ Եղիազարյանը:

«Հայ-իրանական հարաբերություններում Իրանի նախագահի այցը բեկում չի կարող համարվել, քանի որ Հայաստանը գտնվում է Ռուսաստանի ազդեցության ներքո եւ այդ ազդեցությունը մեծացավ ԵՏՄ-ին անդամակցելուց հետո: Ներդրողները Հայաստան չեն գալիս, որովհետեւ լուրջ քաղաքական ջիսկեր կան: Անհնար եմ համարում նաեւ ԵՏՄ-ի եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի մասին համաձայնագիր, Իրանը դրան երբեք չի գնա», - ասաց նա:

Խոսելով Հայաստանում Իրանին հետաքրքրող ներդրումային ոլորտների մասին փորձագետը նշեց, որ դա հայ-իրանական երկաթգծի կառուցումն է:

«Հայաստան-Իրան երկաթգծի կառուցումը իրականություն դարձնելու համար Հայաստանը պետք է գրկի Ռուսաստանի երկաթգծերին տրված արտոնություններից: Այդ նախագիծը շատ կարելու է թե Հայաստանի թե Իրանի համար: Ներդրողների պակաս հաստատ չենք գրա», - ասաց նա:

Բանգլադեշը կարող է դառնալ առաջին սուննի մահմեդական երկիրը, որը կճանաչի Հայոց ցեղասպանությունը. Բագրատյան



Բանգլադեշը կարող է դառնալ առաջին սուննի մահմեդական երկիրը, որը կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Այս մասին facebook-ի իր էջում գրել է ՀԱԿ խմբակցության պատգամավոր, նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը: Նա, մասնավորապես, նշել է.

«Երեկ օրենսդրական նախաձեռնության կարգով ԱԺ քննարկմանն եմ ներկայացրել «1971թ Բանգլադեշում Պակիստանի բանակի կողմից իրականացրած բենգալացի ժողովրդի ջարդերը որպես ցեղասպանություն ճանաչելու» օրենքի նախագիծը: Այդ ժամանակ սպանվել է մինչև 3 մլն բենգալացի: Նյութերն ինձ տրամադրել է իմ լավ բարեկամ Թարուն Չշիդրուն: Յախյա խանը 1971-ին հրամայել էր վերացնել բենգալացի ժողովրդին: Միևնույն ժամանակ հույս կա, որ Բանգլադեշը կդառնա առաջին սուննի մահմեդական երկիրը, որը կճանաչի հայոց ցեղասպանությունը»:

Արևմտյան Հայաստան

Թուրք-քրդական բախումներից տուժած Դիարբեքիրի հայկական եկեղեցիները վերանորոգվելու են



Թուրքիայի հիմնադրամների գլխավոր վարչությունը վերանորոգելու է քրդաբնակ Դիարբեքիր քաղաքի Սուրի շրջանում գտնվող պատմական կառույցները, որոնք վնասվել էին թուրք-քրդական բախումների հետևանքով:

Թուրքական Anadolu գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի հիմնադրամների գլխավոր վարչությունը հայտարարել է, թե վերանորոգելու է Սուրի շրջանում գտնվող եւ մեկ տարի առաջ բախումների հետևանքով վնասված 11 պատմական կառույց, որի մեջ են հայկական կաթոլիկ ու բողոքական եկեղեցիները:

Նշվում է, որ միայն հայկական կաթոլիկ եկեղեցու վերանորոգման համար հատկացվելու է 2 մլն լիրա (650 հազար դոլար): Նշված պատմական շինությունների վերանորոգման համար նախատեսված է ծախսել ընդհանուր 40 մլն լիրա: Եկեղեցիների վերանորոգման ավարտը նախանշվում է 2018 եւ 2019 թվականները:

Սուրի հայկական կաթոլիկ ու բողոքական եկեղեցիները վերանորոգվել էին 2011-ին:

Սուրում է գտնվում նաև Մերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին՝ Սուրբ Կիրակոսը, որը եւս 2011-ին վերանորոգումից հետո բացվել էր որպես գործող եկեղեցի: Սուրբ Կիրակոսը եւս վնասվել է բախումների հետևանքով:

Թուրքիայում վերանորոգված եկեղեցին մանկական գրադարան են դարձնելու

Թուրքիայի Նիդդե (Կապադոկիա) քաղաքում գտնվող հայկական եկեղեցին վերանորոգումից հետո նախատեսվում է դարձնել մանկական գրադարան:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ Նիդդե քաղաքում գտնվող պատմական հայկական եկեղեցու ճակատագրի վերաբերյալ Նիդդեի նահանգային խորհրդարանում տեղի ունեցած քննարկման ժամանակ առաջարկվել է արդեն վերանորոգված եկեղեցին հանձնել Մշակույթի նախարարության գրադարանների վարչու-

թյանը՝ եկեղեցին մանկական գրադարան դարձնելու համար:

Առաջարկն ընդունվել ու ուղարկվել է բյուջեի հանձնաժողով, որտեղ էլ վերջնական որոշում կկայացվի եկեղեցու վերաբերյալ:



Նշենք, որ Նիդդեի եկեղեցին Ցեղասպանությունից հետո գտնվում էր լքված ու ավերված վիճակում: Դեռեւս 2011-ին Թուրքիայի մշակույթի նախկին նախարար Էրթուրուլ Գյունայն այցելել էր Նիդդեի հայկական եկեղեցի: Նա կարեւորել էր պատմական հուշարձանի վերականգնումն ու պահպանությունը՝ նշելով, որ դրանք կնպաստեն զբոսաշրջիկների այցելությունների ավելացմանը: Նախարարի հրահանգով սկսվել էր եկեղեցու վերանորոգումը:

Դիարբեքիրում Սուրի քաղաքապետարանի շենքի վրայից հանել են հայերենով գրությունը



Դիարբեքիրի Սուրի շրջանի նախկին քուրդ քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշի տեղադրած հայերենով ու ասորերենով գրությունները հանվել են Սուրի քաղաքապետարանում նշանակված հարկադիր կատարողների կողմից:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ Դիարբեքիրի Սուրի քաղաքապետարանում ձեռքակալված քուրդ քաղաքապետի փոխարեն նշանակված հարկադիր կատարող Բիլալ Օզքանի հրահանգով քաղաքապետարանի մուտքի մոտ հայերենով ու ասորերենով գրված «Սուրի քաղաքապետարան» գրությունները հանվել են:

Հանված գրության փոխարեն կախվել է Թուրքիայի դրոշը:

Նշենք, որ Արդուլլահ Դեմիրբաշը Թուրքիայում առաջին քաղաքապետն է եղել, որ քաղաքապետարանի շենքի վրա հայերենով ցուցանակ է փակցրել: Մուրի նախկին քաղաքապետ Արդուլլահ Դեմիրբաշը թուրքերենով եւ հայերենով հրատարակել է հայկական մի շարք հեքիաթներ, այդ թվում Թումանյանի «Մի կաթիլ մեղրը»: Դեմիրբաշի նախաձեռնությամբ նաեւ Դիարբեքիրը ներկայացնող տուրիստական ուղեցույցը տպագրվել էր նաեւ հայերենով: Մուրի շրջան մտնող ճանապարհների մոտ դրված ցուցանակների վրա կա նաեւ հայերենով գրված «Բարի եկաք» գրությունը:

Համշենահայերը Մտամբուլում սեմինար են անցկացնելու «Մոխիրներից հառնել» խորագրով



Համշենահայերը ին «Մոխիրներից հառնել» խորագրով Մտամբուլում սեմինար են կազմակերպելու 2016-ի դեկտեմբերի 25-ին, ժամը 12:00-ին: Այդ մասին հաղորդում է Akunq.net-ը:

Աղբյուրի համաձայն՝ համշենահայ լրագրող Ադնան Գենչի նախաձեռնությամբ անցկացվելիք այս սեմինարի ժամանակ ելույթ կունենան համշենահայ մտավորականներ Հիքմեթ Աքչիչեքը և Մահիր Օզքանը: Նաեւ համշենահայական ՀԱՏԻԿ միության ղեկավար և «Վովա» համույթի անդամ հանդիսացող Հիքմեթ Աքչիչեքը կրանախոսի Համշենի պատմության, իսկ «Համշենեան պատմուածներ» գրքի հեղինակ և Անտուան դը Մենտ Էքզուպերիի «Փոքրիկ իշխանը» ստեղծագործությունը հայոց լեզվի Համշենի խոսվածքով թարգմանած Մահիր Օզքանը կխոսի Համշենի բարբառի մասին: Սեմինարը կհամակարգի Սեհեր Քարաթաշը:

Թուրքիայի Մամսուն քաղաքում ապրել են հազարավոր հայեր, իսկ մզկիթները նախկին եկեղեցիներ են. թուրքական կայք

Օսմանյան կայսրությունում Տրապիզոնի սանջակներից մեկը համարվող եւ հայաշատ Մամսուն քաղաքի անցյալին է անդրադարձել Մամսունի լրատվական կայքերից Samsunhaber կայքը:

Թուրքական կայքը գրել է, թե Մամսունի կենտրոնում Թուրքիայի հանրապետության հռչակումից առաջ ապրել են 10 հազարից ավել հայեր, որոնց մեծ մասն ապրել են Մամսունի Սելահիյե թաղամասում:



Մամսունի տեղական պատմության միության նախագահ Էմին Քըրբըլքը նշել է, թե «թաղամասում գտնվող մի շարք տներ դեռ այն ժամանակվա հետքերը պահպանում են: «Սելահիյեի թաղամասում գտնվող Իմամ Հաթիփ դայրոցը եւ Սելահիյեի մզկիթը նախկինում հայկական եկեղեցիներ են եղել: Իսկ Գազի փաշայի դայրոցը նախկինում եղել է հայկական մանկատուն»,–նշել է Էմին Քըրբըլքը:



Մփյուռք

Կարո Փայլանը Թուրքիայի փոխվարչապետից «գյավուր» բառի համար պարզաբանում է պահանջել



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը խորհրդարանում գրավոր հարցադրում է ուղղել «գյավուր» բառով հայտարարություն արած Թուրքիայի փոխվարչապետ Նուման Բուրթուլմուշին:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Կարո Փայլանը Նուման Բուրթուլմուշին ուղղված հարցադրման մեջ պարզաբանում է պահանջել «գյավուր» բառի հետ կապված՝ հիշեցնելով բառարաններում «գյավուր» բառի իմաստներն ու կյանքում օգտագործվող իմաստները:

Կարո Փայլանն իր հարցադրման մեջ հետաքրքրվել է, թե փոխվարչապետը չի մտածե՞ր, որ իր արտահայտությունով ատելության հողի վրա հանցանքների համար հող կնախապատրաստի:

Նշենք, որ օրեր առաջ Նուման Բուրթուլմուշը հայտարարել էր, թե Թուրքիայի համար անկախությունը «գյավուրին» հենց «գյավուր» ասելն է:

Մամուլում մեծ արձագանք էր գտել այս արտահայտությունը, որից հետո փոխվարչապետը ասել էր, թե «գյավուրը» ոչ մի կապ չունի ոչ մահմեդականների հետ: «Մենք «գյավուր» ենք ասում բռնապետին, անարդարին, կայսերապաշտին: Դա ոչ մուսուլմանների հետ կապ չունի», – ասել էր Բուրթուլմուշը:

Կիլիկիո կաթողիկոսությունը Միսի տարածքի վերադարձի հայցով դիմում է ՄԻԵԴ.

Թուրքիայի դեմ հայցը կներկայացվի այսօր

Թուրքիայի Սահմանադրական դատարանը մերժել է Միսի կաթողիկոսարանի տարածքի վերադարձի մասին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պահանջով դատի քննարկումը եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը որոշել է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Մեծի Տանն Կիլիկի կաթողիկոսությունից հայտնում են, որ հայցը կներկայացվի այսօր՝ դեպտեմբերի 6-ին:

«Դեկտեմբերի 6-ը կարելու օր է լինելու ընդհանրապես հայ ժողովրդի եւ մասնավորապես հայ եկեղեցու համար: Սա առաջին իրավական քայլն է ընդդեմ Թուրքիայի՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից հետո: Իրավական այս գործընթացը երկար եւ լուրջ մտորումների, խորհրդակցության եւ ուսումնասիրության արդյունք է՝ հիմնված միջազգային իրավունքի վրա, այդ թվում եւ 1932 թվականի Լոզանի կոնֆերանսի որոշումների վրա, որն առնչվում է Թուրքիայի Հանրապետության սահմաններում բնակվող փոքրամասնություններին», – հայտարարել է Արամ Ա կաթողիկոսն իր ուղերձում:



Նշվել է նաեւ, որ դեկտեմբերի 7-ին, Բելգիայում մամուլի ակումբում կեսօրից հետո տեղի կունենա մամուլի ասուլիս՝ մասնակցությամբ տեղական ու միջազգային գործակալությունների, քաղաքական պատասխանատուների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների: Մամուլի ասուլիսին մասնակցելու են՝ Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչը, Բրյուսելի Հայ Դատի գրասենյակի տնօրենը եւ հիշեալ դատը հետապնդող իրավաբանների խմբակի հինգ անդամները:

Հիշեցնենք, որ 2015 թվականի ապրիլի 28-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը եւ Արամ Ա կաթողիկոսը դիմել են Թուրքիայի Սահմանադրական դատարան՝ պահանջելով իրենց վերադարձնել Միսի կաթողիկոսարանի տարածքը: Թուրքիայի ՄԴ-ն իր հերթին դիմել է երկրի արդարադատության նախարարությանը, վերջինս էլ մերժել է դատը՝ համարելով որ այն դուրս է ՄԴ-ի իրավասության շրջանակներից:

Միսի կեցավայրի հարցով ՄԻԵԴ դիմելը Հայ դատի շրջանակում իրավական առաջին քայլն է Արամ Ա-ն՝ Դուբայում



Մեծի տանն Կիլիկիոն Արամ Ա. Կաթողիկոսը Թեհրանի Հայոց թեմ կատարած իր հովվապետական այցի ավարտից

հետո դեկտեմբերի 21-ի երեկոյան ժամանել է Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Դուբայ:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից հայտնում են, որ Արամ Ա-ն օդանավակայանում կարճատեւ հանդիպումից հետո Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի հետ ուղղվել է դեպի Աբու Դաբի:

«Ազգային Առաջնորդարանով, եկեղեցիով, Ազգային վարժարանով ու հարակից լայն հնարավորություններով օժտված Ազգային եկեղեցական համալիրը պետք է լցնել ու իմաստավորել մեր ժողովրդի ներկայությամբ ու գործուն մասնակցությամբ»,- իր խոսքում նշել է Վեհափառ Հայրապետը, ով նույն գիշեր վերադարձել է Դուբայ:

Ապա Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ կարիքաւորներու օգտակար դառնալու, եկեղեցւոյ, դպրոցի, գաղութին ու Հայրենիքի աշխատանքներուն մասնակից դառնալու, անոնց ծրագիրներուն օգտակար դառնալու անհրաժեշտութեան:

Ս. եւ Ամնահ պատարագէն անմիջապէս ետք տեղի ունեցաւ աջահամբոյր: Ապա Վեհափառ Հայրապետը կարճ այցելութիւն մը տուաւ եկեղեցւոյ կից գտնուող Ազգային Օհաննէսեան Վարժարան, ուր տեղի կ'ունենար յիշեալ վարժարանի աշակերտներուն կողմէ պատրաստուած Նոր Տարուայ տօնակատարութիւնը:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը Ծարժայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ օժումը, ինչպէս նաեւ Ազգային Օհաննէսեան Վարժարանի բացումը կատարած էր 1998 թուականին:

Դեկտեմբերի 23-ի երեկոյան բարերար Տեր եւ Տիկին Հրայր Եւ Սակի Սողոմոնյանները ճաշկերույթով պատվել են Արամ Ա-ին, որին ներկա են եղել Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Կաթարի թեմի Ազգային իշխանության անդամներն ու բարերարներ:

Ճաշկերույթի ժամանակ կաթողիկոս Արամ Ա-ն բացատրություններ է տվել Թուրքիայի Սահմանադրական դատարանին ու ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Միսի Կաթողիկոսարանի վերադարձը պահանջող Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դատի մասին՝ նշելով, որ դա ազգային պահանջատիրության շրջանակում իրավական առաջին քայլն է:

Միջազգային

Լեոնարդո Դի Կապրիոն 65 հազար դոլար է փոխանցել «Հայաստանի մանուկներ» հիմնադրամին

Օսկարակիր դերասան Լեոնարդո Դի Կապրիոն դեկտեմբերի 9-ին Նյու Յորքում նվիրատվություն է կատարել հայ գիտնական, բարերար Կարո Արմենի հիմնած «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (COAF) տարեկան դրամահավաք-երեկույթի ժամանակ:

Arelevk.am-ի փոխանցմամբ, դերասանի նվիրատվությունը՝ Հայաստանի գյուղական համայնքներում ապրող մանուկներին, կազմել է 65 հազար ԱՄՆ դոլար: Լեոն այդքան գումարով գնել է նկարիչ Ջո Բրադլիի՝ հավաքույթի ժամանակ աճուրդի դրված նկարներից մեկը, որի գումարն ամբողջությամբ ուղղվել է հիմնադրամին: Հավաքույթի

ընթացքում նաև այլ արվեստի գործեր են վաճառվել: Ամբողջ երեկոյի ընթացքում նվիրատվությունների միջոցով հավաքվել է 3.1 մլն դոլար, որով հիմնադրամը շարունակելու է իր՝ արդեն մեկնարկած ծրագրերը Հայաստանում:



Ավելի վաղ հիմնադրամին աջակցելու և նվիրատվություններ անելու կոչ էր հղել աշխարհահռչակ դերասան Թոմ Հենքսը եւ այլ հայտնի անձինք:

«Հայաստանի մանուկներ» (COAF) հիմնադրամի ամենամյա բարեգործական ընթրիքը վարել է հայկական ծագումով հոլիվուդյան կատակերգակ դերասանուհի Անդրեա Մարտինը:



Նշենք, որ հիմնադրամի գործունեությունը միտված է Հայաստանի կարիքավոր գյուղական բնակավայրերում երեխաների համար բարեկեցիկ ապագա կառուցելուն:

Թուրքիան կկատարի ԱՄՆ-ում մեկնաբանում են Հայոց ցեղասպանության մասին ՄԱԿ-ում ԱՄՆ դեսպանի հայտարարությունը

Արդյոք Օբամայի վարչակազմը քողագերծված կերպով ճանաչե՞լ է Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի դեմ իրականացված ջարդը որպես ցեղասպանություն: Այս հարցն են տալիս այսօր մամուլի մի շարք միջոցներ, Հայոց ցեղասպանության մասին ԱՄՆ-ի թիվ երկու ամենաբարձրաստիճան դիվանագետ, ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպան Սամանթա Փաուերի հրապարակային հայտարարությունից հետո, հաղորդում է «Ամերիկայի ձայնը»:

Փաուերը Հրեական ողջակիզմանը նվիրված վերջերս անցկացված մի հանդիպման ժամանակ, խոսելով պատմական անարդարությունների մասին, խոսել էր նաև «Հայոց ցեղասպանությունը հերքողների մասին»:

«Արդյոք Օրամայի վարչակազմը քողագերծված կերպով ճանաչել է Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի դեմ իրականացված ջարդը որպես ցեղասպանություն»։ այս նույն հարցն է տալիս «Նյու Յորք Թայմս» օրաթերթը՝ նշելով, որ այս 4 բառերը կարող են «կատաղեցնել» ՆԱՏՕ-ում ԱՄՆ-ի դաշնակից Թուրքիային, որը ամեն գնով է հակադարձում Յեղասպանության մասին որեւէ ակնարկ անգամ։ Ու քանի որ Թուրքիան գտնվում է աշխարհի ամենաանկայուն տարածաբաններից մեկում, մեկ դար առաջ տեղի ունեցած ջարդերի մասին խոսելիս, ԱՄՆ-ի պաշտոնատար անձինք ցուցաբերում են ծայրահեղ զգուշավորություն, գրում է թերթը։

Մինչև Օրամայի վարչակազմ ընդունվելը, Պուլիցերյան մրցանակակիր լրագրող Փաուերը բազմիցս է գրել Հայոց ցեղասպանության նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման մասին։ Ինչպես թերթն է գրում, պաշտոնավարման ընթացքում էլ նա բազմիցս է կուլիսների հետևում լոբբիինգի աշխատանք իրականացրել, որպեսզի Օրաման պաշտոնապես ճանաչեր Հայոց ցեղասպանությունը։

Հայոց ցեղասպանության մասին Փաուերի խոսքերից հետո մեկնաբանությամբ է հանդես եկել նաև ԱՄՆ-ի պետդեպարտամենտի խոսնակ Մարք Թոները՝ հիշեցնելով, որ «Այս վարչակազմը եւ նախագահը, ինչպես նախորդները, պարբերաբար սզացել են մեկ եւ կես միլիոն հայերի համար, որոնք ջարդի են ենթարկվել Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին։ Մենք կոչ ենք արել լիակատար ու անկեղծ կերպով ընդունել փաստերը։ Եվ դա այսօր էլ մնում է մեր քաղաքականությունը։ Չեմ ուզում մտնել տերմինաբանության խորքերը, սակայն մենք ուզում ենք տեսնել այդ դեպքերի նկատմամբ պատմական լիակատար մոտեցում։ Իսկ Սամանթա Փաուերի խոսքերն արտասանվել են Հրեական ողջակիզման համատեքստում։ Եվ նրա խոսքերը չեն արտացոլում վարչակազմի քաղաքականության մեջ որեւէ փոփոխություն»։

Ամերիկյան թերթերը գրում են, որ չնայած Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին նախընտրական արշավի ընթացքում տրված մի քանի խոստումներին, նախագահի պաշտոնում Օրաման հրաժարվեց այդ քայլից՝ դժգոհություն ու զայրույթ առաջ բերելով փաստաբանների ու ԱՄՆ-ի կոնգրեսականներից շատերի մոտ։

Կոնգրեսական Ադամ Շիֆը վստահ է, որ ԱՄՆ-ը պետք է հստակ ու պարզորոշ կերպով խոսի Հայոց ցեղասպանության մասին։ «Ամերիկայի Չայն»-ի հայկական ծառայության հարցին ի պատասխան, կոնգրեսականն ասում է.

«Ես կոչ եմ անում վարչակազմի մյուս պաշտոնյաներին ու նախագահին եւս, խոսել Հայոց ցեղասպանության մասին։ Այսօր, երբ Օրամային մնացել է պաշտոնավարման համար միայն մի քանի շաբաթ, նա կարող է կատարել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու նախընտրական արշավի ընթացքում տրված իր խոստումները»։

Կոնգրեսական Ֆրենք Փալոնը, հիշեցնելով Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ-ի կողմից պաշտոնապես ճանաչվելու գործում Կոնգրեսում Հայկական հարցերով հանձնախմբի աշխատանքների մասին, ասում է. «Շատերն են հավատում, որ Կոնգրեսն ու երկրի նախագահը մի օր ճանաչելու են Հայոց ցեղասպանությունը, եւ ես շատ գոհ եմ, որ Սամանթա Փաուերը հանդես եկավ այդ հայտարարությամբ»։

«Հերքողական պատի մեջ անցք բացելու» մասին է խոսում նաև Հայաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջոն Էվանսը՝ հիշեցնելով «Խնդիր՝ դժոխքից» վերտառությամբ Փաուերի գրքի մասին, որը սկսվում է հենց Հայոց ցեղասպանության մասին պատմելով։

«Ես մեծ հարգանք եմ տածում նրա նկատմամբ, որպես գիտնական ու հրապարակախոս։ Սակայն նա այլ դեր կատարեց անցած տարիներին որպես ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպան։ Բայց ի վերջո կարողացավ դատապարտել անհերքելի փաստերի հերքումը», - ասում է Ջոն Էվանսը։

Էվանսի խոսքերով, այսօր, երբ միայն 40 օր է մնացել Փաուերի պաշտոնավարմանը, դժվար թե նրա համար այդ հայտարարությունն ունենա անձնական հետևանքներ։ Վերադառնալով «Նյու Յորք Թայմս»-ի հոդվածին, կատարենք եւս մեկ մեջբերում.

«ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջիմի Բարթերը 1978 թվականին գրեթե մոտեցել էր «ցեղասպանություն» եզրին, երբ հայտարարեց, թե «նպատակաուղղված ջանք է կիրառվել ամբողջ հայ ժողովրդին ջնջելու համար։ Ռոնալդ Ռեյգանն էր, որը 1981 թվականին արտասանեց «Հայերի ցեղասպանություն» բառակապակցությունը՝ դառնալով ԱՄՆ-ի մինչ այժմ վերջին նախագահը, որը հայերի դեմ իրականացված ջարդերը ճանաչել է որպես ցեղասպանություն»։

Մշակույթ

Ֆրեյդուն Մոշիրի

*Թարգմանիչ՝ Էմմա Բեգիշանյան
Խմբագիր՝ Հովիկ Վարդունյան*

Ֆրեյդուն Մոշիրին (1926-1990թթ.) Իրանի ժամանակակից հայրանի բանաստեղծներից է, ծնվել է 1926թ. սեպտեմբերի 21-ին Թեհրանում, ծառայողի ընտանիքում։

Մոշիրին սկսել է ստեղծագործել պատանի հասակում՝ 15 տարեկանից։ Հատկանշական է, որ նա սկզբնական շրջանում, մասնավորապես սվազ դպրոցում եւ համալսարանում ուսանելիս, ստեղծագործում էր դասական տաղաչափական օրենքներով։ Հետագայում, ծանոթանալով նոր բանաստեղծական «Շեր-ե նոն ձեւաչափին, հրաժարվեց դասականից, բայց եւ այնպես երբեք տուրք չտվեց դրա ծայրահեղ դրսևտորումներին։ Այլ խոսքով՝ նա ոչ ախանդապահության գերին դարձավ, ոչ էլ հնայվեց նորի ծայրահեղականությանը, ընտրելով միջին ուղի, որն Իրանի գրականության մեջ հայտնի է իբրև նոր բանաստեղծական տաղաչափություն՝ կոտրելով տաղաչափական կարծրատիպերը, բանաստեղծական տողերը մեծանուն ու փոքրանուն են, սակայն հանգավորումը կիրառվում է տեղին ու տրամաբանական։

Ինչ վերաբերում է ստեղծագործությունների թեմաներին, ապա նա նոր հայացքով է նայում բնությանը, առարկաներին եւ մարդ արարածին, դրանք միահյուսելով իր յուրահատուկ նրբանկատությամբ ու զգացմունքներով, ինչը միանգամայն ընդգծված առանձնահատկություն է հաղորդում Մոշիրի ստեղծագործություններին, այնպես, որ հազիվ թե շփոթես ուրիշի հետ։

